- iv.** Հիմնվելով այս տվյալների վրա՝ կարո՞ղ եք գնահատել հատվածի երկարությունը: Պատասխանը հիմնավորել:

§38. Պատահույթ: Պատահույթի հավանականությունը

Գիրք: Greg Attwood, Alan Clegg, Gill Dyer, Jane Dyer. Edexcel Modular Mathematics for AS and A Level: Statistics S1, Pearson, 2011

Պատահույթի հավանականություն

Հավանականությունը մաթեմատիկայի կարևոր բաժիններից մեկն է: Այն շատ կարևոր տեղ ունի դրամային շուկաներում, եղանակի կանխատեսման համար, քվանտային տեսությունում և այլ բնագավառներում, երբ վիճակագրությունը կիրառվում է իրական խնդիրներում:

Հավանականությունների բառարանը

- Երբ դուք ցանկանում եք կանխատեսել ինչ-որ բանի ապագայում պատահելու հնարավորությունը, ապա օգտագործում եք հավանականությունը.
 - **Փորձը** կրկնվող պրոցես է, որի արդյունքում ձևավորվում են **ելքերը**
 - **Պատահույթը** *մեկ կամ մի քանի* ելքերի բազմությունն է
 - **Նմուշների տարածությունը** փորձի բոլոր հնարավոր ելքերի բազմությունն է
- Պատահույթների և նմուշների տարածությունները բազմություններ են և բազմությունների տերմիններն էլ օգտագործվում են դրանք նկարագրելու համար: Լատիներեն մեծատառերով նշանակում են պատահույթները: Պատահույթի հավանականությունը փորձի արդյունքում պատահույթի պատահելու հնարավորությունն է:
 - Երբ բոլոր ելքերն հավասարապես հնարավոր են, **պատահույթի հավանականությունը** այդ պատահույթի բոլոր ելքերի քանակի և նմուշների տարածության բոլոր հնարավոր ելքերի քանակի հարաբերությունն է
 - Անհնար պատահույթն ունի 0 հավանականություն, իսկ հավաստի պատահույթի հավանականությունը 1 է:
 - Քանի որ բոլոր պատահույթների հավանականություններն ընկած են անհնար և հավաստի պատահույթների հավանականությունների միջև, ապա հավանականությունները սովորաբար գրվում են սովորական կոտորակի կամ տասնորդական թվի տեսքով, ինչպես նաև տոկոսներով: Այս գրքում կօգտագործենք կոտորակներն ու տասնորդական թվերը:

Օրինակ 1

Չկեղված գառի նիստերի վրա գրված են 1-ից 6 թվերը: Մեկ անգամ գառը նետելուց հետո գրացնել են վերին նիստի վրա գրված թիվը:

ա. Գտնել հավանականությունը, որ վերին նիստի վրա կլինի 5 թիվը:

բ. Գտնել կենտ թիվ դուրս բացվելու հավանականությունը:

ա. Չառն ունի 6 նիստ և մեկ նիստի վրա կլինի 5 թիվը, հետևաբար 5 թիվը վերին նիստի վրա լինելու հավանականությունը կլինի $\frac{1}{6}$ կամ 0,16:

բ. Կենտ թվերն են 1, 3, 5: Հետևաբար կենտ թիվ բացվելու հավանականությունը կլինի $\frac{1}{6} = \frac{1}{2}$ կամ 0,5:

Նմուշների տարածություն
ունի 6 ելք՝ 1, 2, 3, 4, 5 և 6, քանի որ բոլոր թվերն են կարող են բացվել:

Մեկ ելքի դեպքում վերին նիստին 5 կբացվի՝ բաժանած 6 հնարավոր ելքերի քանակի վրա:

3 ելք համապատասխանում է կենտ բացվելու պայմանին՝ 1, 3, 5:

3 ելքերի քանակը բաժանենք 6 հնարավոր ելքերի քանակի վրա:

Օրինակ 2

Երկու չկեղծված պտուտակ (spinner) ունեն 4 նիստ, որոնց վրա գրված են 1-ից 4 թվերը: Երկու պտուտակը միաժամանակ նետելուց հետո գրանցում են նրանց վրա բացված թվերի գումարը:

Գտնել հավանականությունը, որ այդ գումարը կլինի

ա. ճիշտ 5

բ. 5-ից մեծ

Պտուտակների վրա բացված թվերը ներկայացնելու համար գծել երկու առանցք:

Դիագրամի 16 կետերը ներկայացնում են նմուշների տարածությունը:

Ընդամենը կա 16 թիվ, որոնցից յուրաքանչյուրը հավասարապես հնարավոր է, քանի որ պտուտակը կանոնակարգված է:

Այս հատվածում կա 4 ելք.
1+4 2+3 3+2 4+1

F-ով նշանակված է «թվերի գումարը ճիշտ 5 է» պատահույթը

P() անգլերեն Probability (հավանականություն) բառից է:

6 ելքի համար գումարը մեծ է 5-ից՝ քառակուսու վերին աջ մասում: 2+4, 3+4, 4+4, 3+3, 4+3, 4+2: Պատասխանը կարելի է գրել 0,375:

Ընդամենը կա չորս հատ 5 և 16 ելք:
Հետևաբար
ա. $P(F) = \frac{4}{16} = \frac{1}{4}$
բ. $P(5 - \text{ից մեծ}) = \frac{6}{16} = \frac{3}{8}$

Խնդիր 5Ա.

Հետևյալ փորձերի համար պարզել նմուշների տարածությունը և հաշվել պատահույթների հավանականությունը.

1. Չկեղծված զառը նետում են մեկ անգամ և գրանցում են, թե բացված թիվը կենտ է թե զույգ: Գտնել զույգ բացվելու հավանականությունը:
2. Նետում են երկու մետաղադրամ: Գտնել հավանականությունը, որ երկուսի վրա էլ կբացվի միննույն երեսը:
3. Թղթախաղի տուփում կա 52 խաղաթուղթ, որից հանում են մեկ խաղաթուղթ: Գտնել հավանականությունը, որ այն սիրտ նշանով է:
4. 52 խաղաթղթի տուփից հանում են մեկը, գրանցում նշանը և վերադաձնում տուփ: Ապա հանում են ևս մեկ թղթադրամ: Գտնել կամայական հերթականությամբ ազուռի և խաչի նշաններ դուրս գալու հավանականությունը:
5. Նետում են զառ և մետաղադրամ: Գտնել գերբ և 6 բացվելու հավանականությունը:
6. Նետում են 2 հատ 6 նիստանի զառ և գրանցում կողային նիստերի վրա բացված երկու ամենամեծ թվերի արտադրյալը: Գտնել հավանականությունը, որ արդյունքը մեծ է 24-ից:

§39. Արտարժույթներ

ՏԵՐՄԻՆՆԵՐ

Արտարժույթ – այլ երկրի արժույթ

Փոխարժեք – մի արժույթի գնանշումն այլ արժույթով: Գնանշումը կարող է կատարվել ուղիղ և անուղղակի ձևերով: Ուղիղ գնանշման դեպքում այլ երկրի արտարժույթի փոխարժեքն արտահայտվում է տվյալ երկրի արժույթի գնով, մեր երկրի օրինակով՝ 1 եվրո = XXX դրամ: Անուղղակի գնանշման պարագայում ազգային արժույթի գինն է արտահայտված այլ երկրի արտարժույթի փոխարժեքով, օրինակ՝ 1 դրամ = XXX եվրո:

Առքի/վաճառքի փոխարժեք – արժույթի փոխանակմամբ զբաղվող ֆինանսական կազմակերպությունները հայտարարում են արժույթի առքի և վաճառքի տարբեր փոխարժեքներ, որոնք ներկայացված են իրենց տեսանկյունից: Այսինքն, եթե անձը ցանկանում է ձեռք բերել եվրո, պետք է հաշվի առնի վաճառքի փոխարժեքը:

Վաճառքի փոխարժեքը միշտ ավելի մեծ է քան առքի փոխարժեքը:

Արժույթի առաջարկ – արժույթի այն քանակը, որը ցանկանում են և կարող են վաճառել:

Արժույթի պահանջարկ - արժույթի այն քանակը, որը ցանկանում են և կարող են գնել:

Արտարժույթի փոխանակման կետ – ֆինանսական կազմակերպությունը, որը ՀՀ ԿԲ-ի կողմից տրված լիցենզիայի համաձայն իրականացնում է արտարժույթի առք և վաճառք:

Ազատ լողացող փոխարժեքի ռեժիմ – Արժույթի փոխարժեքի ձևավորումը առաջարկի և պահանջարկի հիման վրա:

Միջին շուկայական փոխարժեք – արտարժույթի շուկայում կատարված գործարքների արդյունքում ձևավորված փոխարժեք, որը հաշվարկվում է առքի և վաճառքի միջին կշռված ցուցանիշների հիման վրա:

ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՄԱՍ

Ինչպես ՀՀ-ն, այնպես էլ ցանկացած այլ պետություն ունի իր պաշտոնական արժույթը: Հայաստանի դեպքում դրամն է, իսկ օրինակ՝ ԱՄՆ-ի դեպքում դոլարը (□), Եվրոպական մի շարք երկրների դեպքում եվրոն (€), Վրաստանի դեպքում՝

լարին և այլն:

Արտարժույթը, ինչպես ցանկացած այլ ապրանք կամ ծառայություն կարող է գնվել կամ վաճառվել: Արտարժույթ պետք է լինում գնել այն ժամանակ, երբ օրինակ՝ պատրաստվում ենք մեկնել արտասահման: Քանի որ այլ երկրներում չենք կարող ծախսել մեր երկրի արժույթը (այն ընդունված չէ տվյալ երկրի կողմից որպես պաշտոնական փող), մենք փոխանակում ենք մեր երկրի արժույթը այն երկրի արժույթով, ուր պատրաստվում ենք մեկնել: Արտարժույթի առքուվաճառքով զբաղվող ֆինանսական կառույցների (բանկերի, արտարժույթի փոխանակման կետերի և այլն) համար արտարժույթը, ըստ էության, «ապրանք» է, որը նրանք գնում կամ վաճառում են: Ուստի բանկերն ու մնացած ֆինանսական կազմակերպություններն իրենք են որոշում իրենց կողմից գնվող կամ վաճառվող արտարժույթի գները՝ արտարժույթի **փոխարժեքները**, ելնելով տվյալ արտարժույթի առաջարկից ու պահանջարկից և արտարժույթի շուկայում տիրող իրավիճակից:

Փոխարժեքի որոշման վրա ազդում են մի շարք գործոններ, որոնք պայմանավորում են շուկայում այս կամ այն արժույթի **առաջարկը** կամ **պահանջարկը**: Այսպես, օրինակ, արտահանման անը բերում է ՀՀ արժույթային շուկայում արտարժույթի առաջարկի աճին. արտահանողներն իրենց եկամուտները ստանում են օտարերկրյա արժույթով, օրինակ՝ ԱՄՆ դոլարով, և ստիպված են լինում այդ դոլարները «վաճառել», այսինքն՝ փոխարկել դրամի, Հայաստանում հայկական ապրանքներ և ծառայություններ ձեռք բերելու նպատակով: Արդյունքում դոլարի փոխարժեքը նվազում է, քանի որ «վաճառվող» դոլարի քանակը շատանում է, իսկ «գնվողը»՝ ոչ: Դրան հակառակ՝ ներմուծման աճի դեպքում մեծանում է արտարժույթի պահանջարկը (ներմուծողները ներմուծված ապրանքների դիմաց պետք է վճարեն արտարժույթով), որի արդյունքում արտարժույթի փոխարժեքը բարձրանում է:

Բացի այդ, բանկերն ու փոխանակման կետերը փոխարժեքը որոշում են՝ ելնելով նրանից, թե այս կամ այն արժույթով որքան ազատ միջոցներ ունեն և ինչպես են պլանավորում դրանք օգտագործել առաջիկայում: Բնականաբար, նրանք հաշվի են առնում նաև մրցակցությունը՝ թե այլ բանկերն ու փոխանակման կետերն ինչ փոխարժեքներ են առաջարկում, և նմանատիպ մի շարք այլ հանգամանքներ:

Օրինակ՝ բանկի սահմանաձև ԱՄՆ դոլարի վաճառքի փոխարժեքը այսօրվա համար կախված է նրանից, թե որքան դոլարային ազատ միջոցներ ունի բանկը, դրանցից որքանը այն կարող է վաճառել, և առաջիկայում ինչ ծավալների դոլարային վարկեր է պատրաստվում տրամադրել կամ դոլարով ինչ ծախսեր կարող է ունենալ (որքան դոլար պետք է ունենալ առաջիկա գործունեության համար): Բանկերում և փոխանակման կետերում արտարժույթի գնման գինը սովորաբար ավելի ցածր է լինում, քան վաճառքի գինը: Սա պայմանավորված է նրանով, որ արտարժույթի առուվաճառքը բանկի կամ փոխանակման կետի համար պետք է շահութաբեր լինի: Գների հենց այդ տարբերությունից էլ ձևավորվում է այդ շահույթը:

Սովորաբար արտարժույթի գնման և վաճառքի գների միջև տարբերությունը փոքրանում է, երբ արժույթային շուկան կայուն է և բարձր մրցակցային, իսկ փոխարժեքը պայմանավորող գործոնների անկայունության կամ իրացվելիության կրճատման հետ այդ տարբերությունը կարող է մեծանալ:

ՀՀ կենտրոնական բանկը Հայաստանում արտարժույթի շուկայի վերահսկող և կարգավորող մարմինն է, բայց այն չի սահմանում փոխարժեքները: Հայաստանում գործում է **ազատ լողացող փոխարժեքի ռեժիմ**, որի պայմաններում դրամի փոխարժեքը ձևավորվում է ազատ շուկայում՝ արտարժույթի առաջարկի ու պահանջարկի փոխազդեցությամբ: Այս պայմաններում ՀՀ կենտրոնական բանկը պարզապես հանդես է գալիս որպես շուկայից օգտվող, կամ այդ շուկայի «խաղացողներից» մեկը, որը գնում և վաճառում է արտարժույթը շուկայում ձևավորված գներով: Որպես վերահսկող և կարգավորող մարմին՝ կենտրոնական բանկը արժույթային շուկայում «միջամտում է» միայն բացառիկ դեպքերում, երբ առկա են փոխարժեքների կտրուկ տատանումներ, որոնք կարող են վնասել ընդհանուր տնտեսությանը: Ընդ որում՝ դրանցից առաջ չի որոշվում, որ փոխարժեքը «պետք է լինի» որևէ կոնկրետ թիվ, այսինքն՝ այդ միջամտությունները նպատակ ունեն ոչ թե ինչ-որ փոխարժեք սահմանելու, այլ հարթելու շուկայի չափազանց մեծ ու կտրուկ տատանումները, որոնք կարող են վնասել հանրությանը:

ՀՀ կենտրոնական բանկը ամեն օր հաշվարկում և հրապարակում է տվյալ օրվա համար ՀՀ դրամի **միջին շուկայական փոխարժեքը** տարբեր արտարժույթների նկատմամբ, որը կիրառվում է միջին շուկայական փոխարժեքը որպես

հաշվարկային միավոր ԿԲ գործառնությունների համար, և ըստ ցանկության այն կարող է օգտագործվել նաև ֆիզիկական ու իրավաբանական անձանց կողմից: Կարևոր է նշել, որ ՀՀ կենտրոնական բանկը ոչ թե սահմանում է Հայաստանում արտարժույթի փոխարժեքները, այլ հաշվարկում և հրապարակում է շուկայում ձևավորված միջին կշռված փոխարժեքները:

Մաթեմատիկական տեքստային և հաշվողական խնդիրների լուծում:

7.1 (արտարժույթ) Արթուրը մեկնելու էր Ջավախք և որոշել էր իր ունեցած 300 դրլարը նախապես փոխանակել լարիով: Այդ նպատակով նա այցելեց իրենց բնակավայրին մոտ գործող տարադրամի փոխանակման երկու կետերը և ծանոթացավ գնացուցակին՝

<<Ա կետ>>

Տարադրամը	Առք	Վաճառք
Դրլար	480	484
Լարի	192	198

<<Բ կետ>>

Տարադրամը	Առք	Վաճառք
Դրլար	482	485
Լարի	193	200

Կատարելով համեմատություններ՝ նա ընտրեց փոխանակման լավագույն տարբերակը: Քանի՞ լարի ունեցավ Արթուրը:

7.3 (գնումներ, արտարժույթ) Չբոսաշրջիկներից մեկն ուներ 2, իսկ մյուսը՝ 3 միանման բլիթներ: Ուստիս նրանց միացավ երրորդ զբոսաշրջիկը, և նրանք միասին, հավասարաչափ կերան այդ 5 բլիթները: Հեռանալիս երրորդ զբոսաշրջիկն իր կերածի համար նրանց տվեց 100 ռուբլի: Երկու զբոսաշրջիկներն այդ գումարը նախ արդար բաժանեցին միմյանց միջև և այնուհետև փոխանակեցին դրամով: Քանի՞ դրամ ստացավ նրանցից յուրաքանչյուրը, եթե 1 ռուբլու փոխարժեքն էր 8 դրամ:

Գործնական և հետազոտական առաջադրանքների դիտարկում:

7.4 (առաջադրանք) Ունենալով 4 երկրների արժույթային փոխարժեքները 2 օրվա համար՝ կազմել համեմատականություն և ցույց տալ, թե ինչպես են դրանք ազդում տարբեր ապրանքների գների վրա, որոնք արտահայտված են այդ արժույթներով:

7.5 (առաջադրանք) Տրված է փոխարժեքի փոփոխությունը երկու արժույթների միջև, պետք է որոշել դրա ազդեցությունը ընտանեկան եկամուտների կամ

ծախսերի վրա, եթե դրանցից որոշները այլ արժույթով են, օրինակ՝ ընտանիքը ստանում է դրամական փոխանցում արտասահմանից, կատարում է վարկի ամսական մարում այլ արժույթով:

7.6 (իրավիճակային խաղ) Հայրիկը պատրաստվում է մեկնել գործուղման: Երբ որ նա հավաքեց բոլոր անհրաժեշտ իրերը, փակեց ճամպրուկը, բոլորս նստեցինք և նա հարցրեց.

- Դե, ի՞նչ պատվերներ ունեք, բայց մի քիչ համեստ, որովհետև ունեմ սահմանափակ գումար - ասաց նա՝ ձեռքերը դնելով գրպանին
 - Նկարչական պարագաներ, – ասաց Արևիկը:
 - Բջջային հեռախոս: Ահա 10 000 դրամ՝ ես խնայել եմ ինձ տրված ամենօրյա գումարից, կարող ես ավելացնել քո գումարին, – ասաց Արթուրը:
 - Ծախսիր այն այստեղ (հայրիկը վերադարձրեց գումարը): Այնտեղ գնումները կատարվում են միայն տարադրամով:
 - Ինչո՞վ, – չհասկացավ Արևիկը:
 - Տարադրամով: Այդ երկրի դրամական միավորով, որտեղ որ գտնվում ես: Ռուսաստանում, ուր որ ես գնում եմ, պետք է ունենաս ռուբլի:
 - Բա որտեղի՞ց այն կվերցնես, – տխրեց Արևիկը:
 - Կվերցնեմ Արթուրի խնայողություններից, – կատակեց հայրիկը:
- Նրանք ծիծաղեցին, հետո գնացին օդանավակայան՝ ճանապարհելու հայրիկին:

Քննարկման հարցեր.

- Ո՞ր երկիր էր գնում հայրիկը:
- Ինչու՞ նա վերադարձրեց Արթուրի տված գումարը:
- Ի՞նչ փող է պետք ունենալ Ռուսաստանում:
- Որտեղի՞ց նա կվերցնի ռուսական ռուբլի:
- Ճշտելով ռուբլու փոխարժեքը, կատարել հաշվարկներ՝ գնահատելով նկարչական պարագաները 25 000 դրամ և բջջային հեռախոսը՝ 150 000 դրամ:
- Քանի՞ ռուբլի անհրաժեշտ կլինի այդ գնումները կատարելու համար:

7.7 (թեստային առաջադրանք)

Հարց 1

Ձեր ծնողները վերադարձել են գործուղումից և ուզում են այնտեղից հետ բերած

Եվրոն փոխանակել դրամի հետ: Նշված տարբերակներից ո՞րն է ավելի նպատակահարմար:

Բանկ 1 – առաջարկում է 1 Եվրոն արժե 537.56 դրամ (առք), այսինքն EUR/AMD - 537.56

Բանկ 2 – առաջարկում է EUR/AMD - 538.25

Բանկ 3 – առաջարկում է EUR/AMD - 537.48

Հարց 2

Գնում եք ամառային դալրոց՝ Գերմանիա: Ո՞ր բանկի առաջարկից կօգտվեք:

Բանկ 1 – առաջարկում է 1 Եվրոն արժե 543.00 դրամ (վաճառք), այսինքն EUR/AMD - 543.00

Բանկ 2 – առաջարկում է EUR/AMD - 542.55

Բանկ 3 – առաջարկում է EUR/AMD - 542.80

Հարց 3

Եթե 1 ֆունտ ստեռլինգը արժե 605 դրամ (առք), այսինքն՝ GBP/AMD – 605.00:

Քանի՞ ֆունտ ստեռլինգ պիտի փոխանակի Հայաստան ժամանած Մերի Փոպինսը, որպեսզի գնի 5 հատ – 15 000 դրամանոց հուշանվեր (գարդանախշերով կուժ-նուռ):

Հարց 4

Վրացական լարիի արժեքը մոտավորապես 0.4 Եվրո է: Քանի՞ թխվածքաբլիթ (խաչապուրի) կարելի է գնել Բաթումում, եթե դուք ունեք 5 Եվրո, իսկ թխվածքաբլիթը արժե 2 լարի:

Հարց 5

Եթե 10 Եվրոն արժե 11 դոլար, իսկ 1 դոլարը արժե 484 դրամ, ապա որքա՞ն դրամ է անհրաժեշտ փոխանակել, որպեսզի գնել 800 Եվրո արժողությամբ ուղևորության կտրոն:

§ 39. Արտարժույթներ

ՏԵՐՄԻՆՆԵՐ

Արտարժույթ – այլ երկրի արժույթ

Փոխարժեք – մի արժույթի գնանշումն այլ արժույթով: Գնանշումը կարող է կատարվել ուղիղ և անուղղակի ձևերով: Ուղիղ գնանշման դեպքում այլ երկրի արտարժույթի փոխարժեքն արտահայտվում է տվյալ երկրի արժույթի գնով, մեր երկրի օրինակով՝ 1 եվրո = XXX դրամ: Անուղղակի գնանշման պարագայում ազգային արժույթի գինն է արտահայտված այլ երկրի արտարժույթի փոխարժեքով, օրինակ՝ 1 դրամ = XXX եվրո:

Առքի/վաճառքի փոխարժեք – արժույթի փոխանակմամբ զբաղվող ֆինանսական կազմակերպությունները հայտարարում են արժույթի առքի և վաճառքի տարբեր փոխարժեքներ, որոնք ներկայացված են իրենց տեսանկյունից: Այսինքն, եթե անձը ցանկանում է ձեռք բերել եվրո, պետք է հաշվի առնի վաճառքի փոխարժեքը: Վաճառքի փոխարժեքը միշտ ավելի մեծ է, քան առքի փոխարժեքը:

Արժույթի առաջարկ – արժույթի այն քանակը, որը ցանկանում են և կարող են վաճառել:

Արժույթի պահանջարկ - արժույթի այն քանակը, որը ցանկանում են և կարող են գնել:

Արտարժույթի փոխանակման կետ – ֆինանսական կազմակերպություն, որը ՀՀ ԿԲ-ի կողմից տրված լիցենզիայի համաձայն՝ իրականացնում է արտարժույթի առք և վաճառք:

Ազատ լողացող փոխարժեքի ռեժիմ – Արժույթի փոխարժեքի ձևավորումը առաջարկի և պահանջարկի հիման վրա:

Միջին շուկայական փոխարժեք – արտարժույթի շուկայում կատարված գործարքների արդյունքում ձևավորված փոխարժեք, որը հաշվարկվում է առքի և վաճառքի միջին կշռված ցուցանիշների հիման վրա:

ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՄԱՍ

Ինչպես ՀՀ-ն, այնպես էլ յուրաքանչյուր այլ պետություն ունի իր պաշտոնական արժույթը: Հայաստանի դեպքում դրամն է, իսկ օրինակ՝ ԱՄՆ-ի դեպքում դոլարը (\$), Եվրոպական մի շարք երկրների դեպքում եվրոն (€), Վրաստանի դեպքում՝ լարին և այլն:

Արտարժույթը, ինչպես ցանկացած այլ ապրանք կամ ծառայություն, կարող է գնվել կամ վաճառվել: Արտարժույթ անհրաժեշտ է լինում գնել այն ժամանակ, երբ օրինակ՝ պատրաստվում ենք մեկնել արտասահման: Քանի որ այլ երկրներում չենք կարող ծախսել մեր երկրի արժույթը (այն ընդունված չէ տվյալ երկրի կողմից որպես պաշտոնական փող), փոխանակում ենք մեր երկրի արժույթը այն երկրի արժույթով, ուր պատրաստվում ենք մեկնել: Արտարժույթի առքուվաճառքով զբաղվող ֆինանսական կառույցների (բանկերի, արտարժույթի փոխանակման կետերի և այլն) համար արտարժույթը, ըստ էության, «ապրանք» է, որը նրանք գնում կամ վաճառում են: Ուստի բանկերն ու մնացած ֆինանսական կազմակերպություններն իրենք են որոշում իրենց կողմից գնվող կամ վաճառվող արտարժույթի գները՝ արտարժույթի փոխարժեքները, ելնելով տվյալ արտարժույթի առաջարկից ու պահանջարկից և արտարժույթի շուկայում տիրող իրավիճակից:

Փոխարժեքի որոշման վրա ազդում են մի շարք գործոններ, որոնք պայմանավորում են շուկայում այս կամ այն արժույթի առաջարկը կամ պահանջարկը: Այսպես, օրինակ՝ արտահանման աճը հանգեցնում է ՀՀ արժույթային շուկայում արտարժույթի առաջարկի աճին. արտահանողներն իրենց եկամուտները ստանում են օտարերկրյա արժույթով, օրինակ՝ ԱՄՆ դոլարով, և ստիպված են լինում այդ դոլարները «վաճառել», այսինքն՝ փոխարկել դրամի Հայաստանում հայկական ապրանքներ և ծառայություններ ձեռք բերելու նպատակով: Արդյունքում դոլարի փոխարժեքը նվազում է, քանի որ «վաճառվող» դոլարի քանակը շատանում է, իսկ «գնվողը»՝ ոչ: Դրան հակառակ՝ ներմուծման աճի դեպքում մեծանում է արտարժույթի պահանջարկը (ներմուծողները ներմուծված ապրանքների դիմաց պետք է վճարեն արտարժույթով), ինչի հետևանքով արտարժույթի փոխարժեքը բարձրանում է:

Բացի այդ, բանկերն ու փոխանակման կետերը փոխարժեքը որոշում են՝ ելնելով այն հանգամանքից, թե այս կամ այն արժույթով որքան ազատ միջոցներ ունեն և ինչպես են պլանավորում դրանք օգտագործել առաջիկայում: Բնականաբար, նրանք հաշվի են առնում նաև մրցակցությունը, թե այլ բանկերն ու փոխանակման կետերն ինչ փոխարժեքներ են առաջարկում, և նմանատիպ մի շարք այլ հանգամանքներ: Օրինակ՝ բանկի սահմանած ԱՄՆ դոլարի վաճառքի փոխարժեքը այսօրվա համար կախված է նրանից, թե որքան դոլարային ազատ միջոցներ ունի բանկը, դրանցից որքանը այն կարող է վաճառել և առաջիկայում ինչ ծավալների դոլարային վարկեր է պատրաստվում տրամադրել կամ դոլարով ինչ ծախսեր կարող է ունենալ (ինչքան դոլար պետք է ունենալ առաջիկա գործունեության համար): Բանկերում և փոխանակման կետերում արտարժույթի գնման գինը սովորաբար ավելի ցածր է լինում, քան վաճառքի գինը: Սա պայմանավորված է նրանով, որ արտարժույթի առուվաճառքը բանկի կամ փոխանակման կետի համար պետք է շահութաբեր լինի: Գների հենց այդ տարբերությունից էլ ձևավորվում է այդ շահույթը: Սովորաբար արտարժույթի գնման և վաճառքի գների միջև տարբերությունը փոքրանում է, երբ արժույթային շուկան կայուն է և բարձր մրցակցային, իսկ փոխարժեքը

պայմանավորող գործոնների անկայունության կամ իրացվելիության կրճատման հետ այդ տարբերությունը կարող է մեծանալ:

Կենտրոնական բանկը Հայաստանում արտարժույթի շուկան վերահսկող և կարգավորող մարմինն է, բայց նա չի սահմանում փոխարժեքները: Հայաստանում գործում է ազատ լողացող փոխարժեքի ռեժիմ, որի պայմաններում դրամի փոխարժեքը ձևավորվում է ազատ շուկայում՝ արտարժույթի առաջարկի ու պահանջարկի փոխազդեցությամբ: Այս պայմաններում ՀՀ կենտրոնական բանկը պարզապես հանդես է գալիս որպես շուկայից օգտվող կամ այդ շուկայի «խաղացողներից» մեկը, որը գնում և վաճառում է արտարժույթը շուկայում ձևավորված գներով: Որպես վերահսկող և կարգավորող մարմին՝ կենտրոնական բանկն արժույթային շուկայում «միջամտում է» միայն բացառիկ դեպքերում, երբ առկա են փոխարժեքների կտրուկ տատանումներ, որոնք կարող են վնասել ընդհանուր տնտեսությունը: Ընդ որում՝ չի որոշվում, որ փոխարժեքը «պետք է լինի» որևէ կոնկրետ թիվ, այսինքն՝ այդ միջամտությունները նպատակ ունեն ոչ թե ինչ-որ փոխարժեք սահմանել, այլ հարթել շուկայի չափազանց մեծ ու կտրուկ տատանումները, որոնք կարող են վնաս հասցնել հանրությանը:

Կենտրոնական բանկն ամեն օր հաշվարկում և հրապարակում է տվյալ օրվա համար ՀՀ դրամի միջին շուկայական փոխարժեքը տարբեր արտարժույթների նկատմամբ, որը կիրառվում է միջին շուկայական փոխարժեքը որպես հաշվարկային միավոր ԿԲ գործառնությունների համար, և ըստ ցանկության՝ այն կարող է օգտագործվել նաև ֆիզիկական ու իրավաբանական անձանց կողմից: Կարևոր է նշել, որ ՀՀ կենտրոնական բանկը ոչ թե սահմանում է Հայաստանում արտարժույթի փոխարժեքները, այլ հաշվարկում և հրապարակում է շուկայում ձևավորված միջին կշռված փոխարժեքները:

Մաթեմատիկական տեքստային և հաշվողական խնդիրների լուծում

7.1 (արտարժույթ) Արթուրը մեկնելու էր Ջավախք և որոշել էր իր ունեցած 300 դոլարը նախապես փոխանակել լարիով: Այդ նպատակով նա այցելեց իրենց բնակավայրին մոտ գործող տարադրամի փոխանակման երկու կետերը և ծանոթացավ գնացուցակին՝

<<Ա կետ>>		
Տարադրամը	Առք	Վաճառք
Դոլար	480	484
Լարի	192	198

<<Բ կետ>>		
Տարադրամը	Առք	Վաճառք
Դոլար	482	485
Լարի	193	200

Կատարելով համեմատություններ՝ նա ընտրեց փոխանակման լավագույն տարբերակը: Քանի՞ լարի ունեցավ Արթուրը:

7.3 (գնումներ, արտարժույթ) Չբոսաշրջիկներից մեկն ուներ 2, իսկ մյուսը՝ 3 միանման բլիթներ: Ուտելիս նրանց միացավ երրորդ զբոսաշրջիկը, և նրանք միասին, հավասարաչափ կերան այդ 5 բլիթները: Հեռանալիս երրորդ զբոսաշրջիկն իր կերածի համար նրանց տվեց 100 ռուբլի: Երկու զբոսաշրջիկներն այդ գումարը նախ արդար բաժանեցին միմյանց միջև և այնուհետև փոխանակեցին դրամով: Քանի՞ դրամ ստացավ նրանցից յուրաքանչյուրը, եթե 1 ռուբլու փոխարժեքն էր 8 դրամ:

Գործնական և հետազոտական առաջադրանքների դիտարկում

7.4 (առաջադրանք) Ունենալով 4 երկրների արժույթային փոխարժեքները 2 օրվա համար՝ կազմել համեմատականություն և ցույց տալ, թե ինչպես են դրանք ազդում տարբեր ապրանքների գների վրա, որոնք արտահայտված են այդ արժույթներով:

7.5 (առաջադրանք) Տրված է փոխարժեքի փոփոխությունը երկու արժույթների միջև, պետք է որոշել դրա ազդեցությունը ընտանեկան եկամուտների կամ ծախսերի վրա, եթե դրանց մի մասն այլ արժույթով է, օրինակ՝ ընտանիքը ստանում է դրամական փոխանցում արտասահմանից, կատարում է վարկի ամսական մարում այլ արժույթով:

7.6 (իրավիճակային խաղ) Հայրիկը պատրաստվում է մեկնել գործուղման: Երբ նա հավաքեց բոլոր անհրաժեշտ իրերը, փակեց ճամպրուկը, բոլորս նստեցինք, և նա հարցրեց.

- Դե ի՞նչ պատվերներ ունեք, բայց մի քիչ համեստ, որովհետև սահմանափակ գումար ունեմ:
- Նկարչական պարագաներ, – ասաց Արևիկը:
- Բջջային հեռախոս: Ահա 10 000 դրամ, ես խնայել եմ ինձ տրված ամենօրյա գումարից, կարող ես ավելացնել քո գումարին, – ասաց Արթուրը:
- Ծախսիր այն այստեղ (հայրիկը վերադարձրեց գումարը): Այնտեղ գնումները կատարվում են միայն տարադրամով:
- Ինչո՞վ, – չհասկացավ Արևիկը:
- Տարադրամով: Այդ երկրի դրամական միավորով, որտեղ որ գտնվում ես: Ռուսաստանում, ուր որ ես գնում եմ, պետք է ունենաս ռուբլի:
- Բա որտեղի՞ց այն կվերցնես, – տխրեց Արևիկը:
- Կվերցնեմ Արթուրի խնայողություններից, – կատակեց հայրիկը:

Նրանք ծիծաղեցին, հետո գնացին օդանավակայան՝ ճանապարհելու հայրիկին:
Քննարկման հարցեր.

Ո՞ր երկիր էր գնում հայրիկը:

Ինչու՞ նա վերադարձրեց Արթուրի տված գումարը:

Ի՞նչ փող է պետք ունենալ Ռուսաստանում:

Որտեղի՞ց նա կվերցնի ռուսական ռուբլի:

Ճշտելով ռուբլու փոխարժեքը՝ կատարել հաշվարկներ՝ գնահատելով նկարչական պարագաները 25 000 դրամ և բջջային հեռախոսը՝ 150 000 դրամ:

Քանի՞ ռուբլի անհրաժեշտ կլինի այդ գնումները կատարելու համար:

7.7 (թեստային առաջադրանք)

Հարց 1

Ձեր ծնողները վերադարձել են գործուղումից և ուզում են այնտեղից հետ բերած եվրոն փոխանակել դրամով: Նշված տարբերակներից ո՞րն է ավելի նպատակահարմար:

Բանկ 1 – առաջարկում է 1 եվրոն արժե 537.56 դրամ (առք), այսինքն EUR/AMD - 537.56

Բանկ 2 – առաջարկում է EUR/AMD - 538.25

Բանկ 3 – առաջարկում է EUR/AMD - 537.48

Հարց 2

Մեկնում եք Գերմանիա՝ ամառային դպրոց: Ո՞ր բանկի առաջարկից կօգտվեք: Բանկ 1 – առաջարկում է 1 եվրոն 543.00 դրամ (վաճառք), այսինքն՝ EUR/AMD - 543.00

Բանկ 2 – առաջարկում է EUR/AMD - 542.55

Բանկ 3 – առաջարկում է EUR/AMD - 542.80

Հարց 3

Եթե 1 ֆունտ ստեռլինգն արժե 605 դրամ (առք), այսինքն՝ GBP/AMD – 605.00: Քանի՞ ֆունտ ստեռլինգ պիտի փոխանակի Հայաստան ժամանած Մերի Փոպինսը, որպեսզի գնի 5 հատ 15 000 դրամանոց հուշանվեր (զարդանախշերով կուծ-նուռ):

Հարց 4

Վրացական լարիի արժեքը մոտավորապես 0.4 եվրո է: Քանի՞ թխվածքաբլիթ (խաչապուրի) կարելի է գնել Բաթումում, եթե ունեք 5 եվրո, իսկ թխվածքաբլիթն արժե 2 լարի:

Հարց 5

Եթե 10 եվրոն արժե 11 դոլար, իսկ 1 դոլարը արժե 484 դրամ, ապա որքա՞ն դրամ է անհրաժեշտ փոխանակել 800 եվրո արժողությամբ ուղևորության կտրոն գնելու համար: